Հավելված N 2
2026 թվականի փետրվարի «10»-ին կնքված
N «1032-11002/2026-ՏԱՏՏ4» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն |
| Դրամաշնորհի N | N 1032-11002/2026- ՏԱՏՏ4 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.02.2026-31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.02.2026-31.03.2026 |
| Ներկայացման օր | 28.04.2026 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Լիլիթ Մուրադյան<br>Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար։

1.1.Անհատական կարիքների գնահատում եւ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում
1.2.Խնամքի անհատական ծրագրի կազմում, առաջին տնայցերի իրականացում
1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում (կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, խորհրդատվական օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն)
2.1. Սոցիալական միջոցառումների պլանավորման մեկնարկ
2.2.Առաջին սոցիալական միջոցառումների կազմակերպում (էքսկուրսիա, տոնական միջոցառում)
3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն
4.2.Անձնակազմի վերապատրաստում
5.1.Համայնքային գործընկերների ներգրավում եւ համագործակցության պայմանների սահմանում

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար։ Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը։

Հաշվետու ժամանակահատվածում Տավուշի մարզի Իջևան քաղաքում տնային խնամքի ծառայության իրականացումն ապահովվել է սահմանված աշխատանքային պլանին և ընթացակարգերին համապատասխան՝ ապահովելով ծրագրի կայուն և համակարգված զարգացումը:

**Ծրագրի իրականացում և շահառուների ներգրավում**
Ծրագրի շրջանակում շարունակվել է նոր շահառուների ներգրավման գործընթացը՝ ՄՄԾ Իջևանի տարածքային կենտրոնի հետ սերտ համագործակցության պայմաններում: Ծառայության մասին համայնքում առկա է բավարար իրազեկվածություն, ինչի արդյունքում ազատ տեղերի առկայության դեպքում համայնքի բնակիչներն ինքնուրույն են դիմում՝ ծառայությունից օգտվելու համար: Սա վկայում է ծրագրի նկատմամբ վստահության և դրա ճանաչելիության բարձր մակարդակի մասին:

**Անհատական գնահատում և ծառայությունների կազմակերպում**
Բոլոր շահառուների համար իրականացվել են անհատական կարիքների գնահատումներ, կազմվել են խնամքի անհատական ծրագրեր և շարունակվել են տնային այցելությունները: Գնահատման գործընթացը միտված է եղել շահառուների իրական կարիքների բացահայտմանը՝ ներառելով սոցիալական, առողջական և հոգեբանական բաղադրիչները, ինչը հնարավորություն է տվել կազմակերպել առավել նպատակային և արդյունավետ ծառայություններ:

**Ծառայությունների տրամադրում և աջակցություն**
Ծրագրի շրջանակում շարունակվել է տնային խնամքի ծառայությունների տրամադրումը՝ ներառելով կենցաղային աջակցություն, խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական օգնություն: Ծառայությունները կազմակերպվում են անհատական մոտեցմամբ՝ ելնելով յուրաքանչյուր շահառուի կարիքներից և առանձնահատկություններից: Սոցիալական աշխատողի կողմից տրամադրվում է շարունակական խորհրդատվություն՝ նպաստելով շահառուների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը և սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնմանը:

**Սոցիալական ակտիվությունների պլանավորում**
Սոցիալական և համայնքային միջոցառումները նախատեսված են իրականացնել հաջորդ եռամսյակում՝ հաշվի առնելով եղանակային պայմանները և շահառուների նախասիրությունները: Այս փուլում իրականացվել է նախնական պլանավորում՝ նպատակ ունենալով ապահովել շահառուների ակտիվ մասնակցությունը և սոցիալական ներառվածության բարձրացումը:

**Անձնակազմի կարողությունների զարգացում**
Շարունակվում է ծրագրի անձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացումը՝ ուղղված տարեցների խնամքի առանձնահատկություններին առավել խորքային տիրապետմանը: Սա կարևոր նախապայման է ծառայությունների որակի պահպանման և շարունակական բարելավման համար:

**Ընդհանուր առաջընթաց և ազդեցություն**
Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են հետևյալ հիմնական արդյունքները՝

- ծառայությունների տրամադրումը իրականացվել է ըստ հաստատված աշխատանքային պլանի,
- պահպանվել և զարգացվել է համագործակցությունը ՄՄԾ Իջևանի տարածքային կենտրոնի հետ,
- ապահովվել է շահառուների կայուն ներգրավվածություն,
- բարձր է համայնքի իրազեկվածությունը ծառայության վերաբերյալ,
- շարունակվում է մասնագիտական կարողությունների զարգացումը:

Ընդհանուր առմամբ, ծրագիրը Իջևան քաղաքում ընթանում է կայուն ընթացքով՝ ապահովելով ծառայությունների հասանելիություն և հիմք ստեղծելով հետագա սոցիալական ակտիվությունների ընդլայնման և ազդեցության խորացման համար:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Առկա չեն: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Իջևան քաղաքում ծրագրի իրականացման ընթացքում արձանագրվել են գնահատման գործընթացին առնչվող մի շարք գործնական խնդիրներ, որոնք ունեն համակարգային բնույթ:

**Հիմնական խնդիրներ**
Գործնական կիրառումը ցույց է տվել, որ գործող գնահատման ձնաթղթերը և մոտեցումները լիարժեք չեն արտացոլում շահառուների բազմաշերտ կարիքները: Սահմանափակ են հատկապես ֆունկցիոնալ, ճանաչողական և հոգեբանական բաղադրիչների գնահատման հնարավորությունները, ինչպես նաև բավարար չէ կապը գնահատման արդյունքների և անհատական խնամքի ծրագրերի միջև:

**Քաղած դասեր և բարելավման անհրաժեշտություն**

- Անհրաժեշտ է կատարելագործել գնահատման գործիքակազմը՝ ներառելով առավել ամբողջական և ապացուցյցահեն մոտեցումներ,
- ուժեղացնել գնահատման և խնամքի պլանավորման միջև կապը,
- շարունակաբար զարգացնել գնահատում իրականացնող մասնագետների հմտությունները՝ ապահովելով կարիքների առավել ճշգրիտ բացահայտում:

**Ընդհանուր գնահատական**
Չնայած նշված դժվարություններին, դրանք չեն խոչընդոտել ծրագրի ընթացքը, սակայն հստակ ընդգծել են գնահատման համակարգի բարելավման անհրաժեշտությունը՝ ծառայությունների արդյունավետությունն ու շահառուակենտրոնությունը բարձրացնելու նպատակով:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում (կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, խորհրդատվական օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն)
2.1. Սոցիալական միջոցառումների պլանավորում
2.2.Սոցիալական միջոցառումների կազմակերպում (էքսկուրսիա, տոնական միջոցառում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Այդպիսի գործողություններ չեն արձանագրվել:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան

--------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նախագահ՝ Արթուր Թորոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.